<<Հանրակթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում >> ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Նոր ուղու միջնակարգ

Թեման՝ <<Արժեքային համակարգի ձևավորումը սովորողների մեջ՝ գրականության դասաժամին>>

Վերապատրաստող,մենթոր՝ Մարինե Զարոյան

Ուսուցիչ՝ Ռուզաննա Հովսեփյան

Արարատ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

1.Արժեքային համակարգի ձևավորումը սովորողների մեջ՝ գրականության դասաժամին

2.Դասի պլան

3.Եզրակացություն

4.Օգտագործված գրականության ցանկ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս առումով,դպրոցն իր ուսերին է վերցրել պետական մտածողություն ունեցող, ազատամիտ, հանրային բարօրության համար պատրաստակամ, ապագա մարտահրավերներին դիմակայելու պատրաստ սերունդ կրթելու և դաստիարակելու դժվարին առաքելութ յունը: Անհրաժեշտ է կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և սերնդեսերունդ փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից: Ուստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը: Դա անմիջականորեն ազդում է երիտասարդ սերնդի մտածելակերպի, գործելակերպի, հոգեբանության և արժեքային կողմնորոշումների վրա: Նա այդ գործընթացների մասնակիցն է, այդ արժեքների ժառանգորդն ու կրողը: Նրա առջև ծառանում է նոր ժամանակի պահանջները:

Ուսուցման գործընթացը դասավանդման և ուսուցման գործընթաց է, որը իրականացնում է ուսուցիչը և այդ ընթացքում աշակերտներին հաղորդում է մարդկության կուտակած սոցիալ-մշակույթային փորձը, զարգացնում է նրանց ճանաչողական գործունեությունը:Ուսումը աշակերտների կողմից ,մշակույթային փորձը, գիտելիքները, կարողություններն ու հմտությունները զարգացնելու գործընթաց է, որը կարևոր ապահովումն է:Ուսուցման գործընթացը անհնար է առանց ուսուցչի և աշակերտի միաժամանակյա գործունեության: Միջնակարգ կրթության համակարգում գրականությունը առանձնահատուկ տեղ ունի անձի ձևավորման, մրա մտավոր առաջնթացի, վերլուծման և պատկերավոր մտածելության զարգացման, ինչպես նաև մնացած բոլոր առարկաների ընկալման և յուրացման համար: Ինչպես Հ. Թումանյանն է ասում. <<Չկա դպրոց առանց գրականության, և չկա գրականություն առանց դպրոցի >>:

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄՈՏ՝ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԺԱՄԵՐԻՆ

Հետազոտության նպատակը – Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը գրականության դասաժամին։

Աշխատանքի մեթոդական և տեղեկատվական հիմքերը: Աշխատանքում առաջադրված խնդիրների լուծման համար մեթոդական հիմք են ծառայել մի շարք հեղինակների կողմից իրականացված հետազոտությունները, հրապարակված գիտական աշխատությունները և դրանցում ներկայացված տեսակետները: Յուրաքանչյուր դասի ժամանակ մեր առջև դրված է խնդիր՝ ուշադրություն դարձնել դասի դաստիարակչական մասին, այդպիսի խնդիրների լուծմանը՝ հաշվի առնելով առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում:Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով առավել արդյունավետ պետք է դարձնի աշակերների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը:

ԻՆՉ ՄԵԹՈԴՆԵՐՈՎ և ՀՆԱՐՆԵՐՈՎ ՁևԱՎՈՐԵԼ ՍՈՎՈՐՈՂԻ ՄՈՏ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ՝ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԺԱՄԻՆ՝ 8-րդ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ՝ ՆՈՐ ՈՒՂՈՒ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Հետազոտության խնդիրները.

1.Առարկայի դասավանդման ընթացքում արժեհամակարգի ձևավորման համար մանկավարժից պահանջվում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք աշակետի, հատկապես դեռահասի անձի նկատմամբ:

2.Դասի ընթացքում առաջարկվող նյութը իր բարոյախոսական և դաստիարակչական մասով նպաստում է աշակերտի ինքնակազմակերպման, որոշ ընդունակությունների,առանձնահատկությունների դրսևորմանը:

3.Առարկայի շրջանակներում դասավանդվող նյութի մեջ գտնել կապը աշակերտի առօրյայի հետ, ինչը կարող է մեծ աղդեցություն ունենալ բարդ թեմաների ընկալման գործում , առաջացած խնդիրների հարթելը հենց աշակերտի ունեցած կենսափորձը հաշվի առնելով:

4. Թեմայի գերխնդիրներից է նաև օգտագործել ճիշտ ընտրված ուսումնական մեթոդներ ՝ դասի դաստիարակչական մասը ապահովելու համար:

5. Արժեհամակարգի ձևավորման մեջ խնդիր է դասարանի ընդհանուր վիճակը, որակը, աշակերտներ անհատական խնդիրները, միջանձնային խնդիրները, սոցիալական խնդիրները և միջանձնային հարաբերությունները, աշակերտի անհատականությունը:

Հետազոտության մեթոդներն են- խմբային աշխատանքը, դասախոսությունը, հարց և պատասխան, 2 բան որ կփոխեի այս թեմայի մեջ և այլն:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին. Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում:

Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, իսկապես, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:

Այսօր աճող սերնդի դաստիարակությունը ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն:

Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն: Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական

դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորցը, ինչը ուսուցչի շնորհիվ, նրա ճիշտ մոտեցմամբ յուրացնում է աշակերտը, իսկ դա նրա մեջ ձևավորում է հայրենասիրություն, սեփական ժողովրդի պատմություն, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում,և դրանք հետագայում աշակերտների մոտ վերածվում են համոզմունքերի կարողությունների:

Ժամանակակից հասարակությունն արմատական փոփոխությունների մի բարդ շրջան է անցնում: Դա անմիջականորեն ազդում է երիտասարդ սերնդի մտածելակերպի, գործելակերպի, հոգեբանության և արժեքային կողմնորոշումների վրա: Նա այդ գործընթացների մասնակիցն է, այդ արժեքների ժառանգորդն ու կրողը: Նրա առջև ծառանում է նոր ժամանակի պահանջներին համապատասխան վերափոխվելու, կարողությունները զարգացնելու և իրացնելու խնդիրը: Ներկայումս կրթությունը վերաճել է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավելարժեքորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային անհրաժեշտ որակներ[1]:

1Բաբանսկ Յու.Կ., Պոբեղանուց և Գ. Ա., Աշակերտների դաստիարակության կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ, էջ՝ 24:

Կրթական միջավայրի և կրթության բովանդակության արդիականացման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների և մեթոդների վերանայում, կրթության նկատմամբ պետական և հասարակական հոգածության արմատական բարելավում: Փոխվեց ժամանակաշրջանը, փոխվեցին նաև արժեքները, փոխվեցին արժեքային կողմնորոշումները, նախասիրություններն ու պահանջմունքները: Նոր իրավիճակը համարժեք մոտեցումներ է պահանջում: Նոր խնդիրներ առաջ եկան, որոնք հրատապ լուծման կարիք ունեն:Նոր սերնդի համար ժամանակակից աշխարհն իր արժեքային համակարգով բավականին բարդ ու անկանխատեսելի էր թվում: Կրթության հիմնախնդիրներով զբաղված մասնագետներին առաջադրված է ճշգրիտ որոշել և բյուրեղացնել այն գլոբալ արժեքները, որոնք անհրաժեշտ էին քսանմեկերորդ դարի քաղաքացուն: Իսկ որո՞նք են այդ արժեքները, և ի՞նչ մեխանիզմներով,հնարներով ու մեթոդներով էին դրանք հասցվելու սովորողին: Այսօրինակ հարցերը քննարկումների նյութ էին դառնում[2]:

Արագընթաց փոփոխությունների, նոր արժեքների այդ հորձանուտում երիտասարդ սերունդը դժվարանում էր իր համար արժեքային կողմնորոշումներ ձևավորել: Արժեքային համակարգի ձևավորումը կարևորվում է նաև այն պատճառով, որ որոշակի արժեքային համակարգի հենքի վրա կառուցված գործողությունները ճանաչելի են և հետևաբար ընդունելի, քանզի դրանք սկիզբ են առնում ազգային, համամարդկային համընդհանուր սկզբունքներից, նորմերից և օրենքներից: Այս տեսանկյունից դիտարկելիս կարևոր է անհատ-քաղաքացու արժեհամակարգի ձևավորումը:

Կրթությունը մարդակենտրոն գործընթաց է, ազգի հիմքը կրթությունն է և ցանկացած լավ, բարի ու արժեքավոր բան, հենց կրթության միջոցով է, որ փոխանցվում է մարդկանց, տարածվում հասարակության մեջ, դաստիարակում մատաղ սերնդին: Եվ այդ ամենը կատարվում է հենց կրթության միջոցով ու կրթության ֆոնի վրա: Կրթության ողնաշարը, կրթության առանցքը արժեհամակարգն է: Այն հիմքերի հիմքն է: Կարծում ենք, որ ցանկացած մարդու համար արժեքային համակարգն այն է, ինչ այդ մարդն ինքն իր համար արժեք է համարում: Ճիշտ է, այսօր մենք մի քիչ շփոթված ենք, որովհետև աշխատանքը համարժեք չի գնահատվում: Բայց միևնույն է, մեզնից յուրաքանչյուրը իր աշխատանքը պետք է պատշաճ կատարի: Մանկավարժը, ուսուցիչը պետք է սեփական օրինակով դաստիարակի սանին, օրինակ ծառայի, որովհետև օրինակի ուժը զորավոր է: Մեր էպոսի հերոսները այսօրվա տասնհինգ տարեկաններին էլ են ոգեշնչում: Ոչինչ, որ նրանք երբեմն ժամանակակից լինելու համար երևութական պատմուճաններ են հագնում, երբեմն աղավաղում են որոշ ազգային արժեքներ, երբեմն էլ աղավաղված հայերենով են խոսում: Նրանց զգալի մասը տառապում է օտարամոլությամբ:

2.Բաբանսկ Յու.Կ., Պոբեղանուց և Գ. Ա., Աշակերտների դաստիարակության կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ, էջ՝ 25:

Երբ ներքին հարստություն ձեռք բերեն, նրանք կհասկանան իրենց սխալը, և դա անպայման կուղղվի: Այսօր նրանք մի քիչ մոլորված են, անցման շրջանի մոլորություն է. չէ՞ որ կյանքում շատ արմատական փոփոխություններ, ճամփաբաժաններ եղան, ու հիմա նրանցից յուրաքանչյուրը պիտի գտնի իր արահետը: Եվ բոլորը չէ, որ ի վիճակի են դա անել: Մենք նրանց պետք է ուղղորդելով, առաջնորդելով սովորեցնենք: Բարոյական վակուում չի լինում, եթե որոշ արժեքներ կորցրել ենք, փոխարենը ուրիշ արժեքներով պետք է դաստիարակենք, իսկ դա պետք է մենք անենք, մենք բոլորս համատեղ՝ընտանիքը, մանկապարտեզը, դպրոցը, բուհը, բանակը: Գարեգին Նժդեհն ասում էր՝ «Տո՛ւր հայ մորը թեկուզ քիչ բան, բայց պահանջիր ամեն ինչ, և նա կանի: Տո՛ւր այսօրվա երիտասարդությանը գեղեցիկի, լուսավորի ու վսեմի օրինակներ, վաղը նրա շնորհիվ մենք կունենանք մեր երազած հայրենիքը»:

Արժեքային կողմնորոշումն անհատի կառուցվածքի կարևորագույն բաղադրիչն է: Զարգացած արժեքային կողմնորոշումը անհատի հասունության նշան է, նրա սոցիալականության ցուցանիշը: Արժեքային կողմնորոշումներից է բխում նաև անհատի ապրելակերպը: Կյանքը սրընթաց առաջ է շարժվում: Գլոբալացման գործընթացը կրթության համակարգի առջև նոր մարտահրավերներ է առաջադրում: «Տեխնոգեն հասարակությունը և տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների մուտքը նոր չափանիշներ են պահանջում, որոնք տարբերվում են երեկվա չափանիշներից: Ինչպիսի՞ն կլինի կրթությունը, ապագայի կրթությունը: Այսօր աշխարհը նոր կրթական մոդելներ է փնտրում: Ովքե՞ր կձևավորեն այն առանցքը, որով հնարավոր կլինի դիմագրավել ժամանակի փորձություններին»[3]:

Ժամանակի հրամայականով այսօր նոր կրթակարգ ստեղծելու աշխատանքներ են տարվում: Արդեն պատրաստ է և քննարկման փուլում է «Ազգային կրթակարգի» նախագիծը, որում ամրագրված են քսանմեկերորդ դարի քաղաքացու արժեհամակարգի բաղադրիչները: Խնդիր, որին ուղղված են կրթության հիմնախնդիրներով շահագրգիռ բոլոր մասնագետների ջանքերը: Այդ փոփոխությունը, ըստ էության, ձևավորում է մեր ապագան,մեր վաղվա օրը: Դա կլինի մի նոր փաստաթուղթ, պայմանագիր՝ այսօրվա քաղաքացու և վաղվա քաղաքացու միջև: Այն կլինի սոցիալական պայմանագիր, կրթության բարեփոխման գործիք: Հայաստանի Հանրապետությունում գործող պետական չափորոշիչը թեև որոշակիորեն արտացոլում էր միջազգային փորձում առկա նմանատիպ փաստաթղթերի սկզբունքները, սակայն ուներ կառուցվածքային, սկզբունքային և բովանդակային մի շարք բացթողումներ, որոնք խոչընդոտում էին հանրակրթության արդյունավետ կազմակերպումը:

3.Մանայան Ն, Հանրակրթության արժեքային համակարգը, <<Մանկավարժություն գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 2004.,թ., N1/2, էջ 6-15:

Համաշխարհայնացման պայմաններում մենք անպայման պետք է հաշվի առնենք եվրոպական առանցքային կոմպետենցիաները՝ բայց միշտ հիշելով, որ չի կարելի ստեղծել «ամորֆ մարդ, գործարանային արդյունք», այլ՝ հայ մարդ, հայ քաղաքացի, որն ապրում է քսանմեկերորդ դարում:

Կրթական տիեզերական դաշտի մեջ մենք պետք է կարողանանք մեր տեսակետը հաստատել: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները[4]:

Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն: Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում:

Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով:

---

4 Մուդրիկ Ա Վ, Դպրոցականի անձը և նրա դաստիրարակությունը կոլեկտիվում, Երևան, 1986թ, էջ՝ 36:

Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «...Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից»:

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը գրականություն առարկայի դասավանդման ընթացքում հարցադրման մեթոդիկայի միջոցով:

Արդյունավետ ուսուցում կազմակերպելու հիմնական խնդիրներից մեկն այն է, որ ուսումնական գործընթացում ակտիվ մասնակցություն ունենան բոլոր աշակերտները և ոչ թե նրանց մի մասը: Իսկ դա ինքնաբերաբար լինել չի կարող, և անհրաժեշտ է, որ ուսուցիչը դասավանդման ընթացքում ստեղծի համապատասխան իրադրություն և ապահովի անհրաժեշտ պայմաններ:

Անհրաժեշտ պայմաններից մեկը, թերևս առաջնայինը, այն է, որ ստեղծվեն այնպիսի դրական շարժառիթներ և բարենպաստ, խթանող միջավայր, դրդապատճառներ, որոնք աշակերտներին կմղեն ուսումնական գործունեության: Իսկ այդ դրդապատճառները բացահայտելու համար պետք է օգտագործել թեմայի և յուրաքանչյուր դասի կրթական ներուժը: Անմիջական կապը շրջապատող իրականության, երեխայի կյանքի ու կենսափորձի, հետաքրքրությունների ու երևակայության հետ, գիտելիքների կիրառական նշանակության պարզաբանումը, դրանց միջոցով իրատեսական հնարավորությունների արտահայտումը և բազմաթիվ այլ արժեքներ, նպատակային օգտագործելու դեպքում, մեծ հեռանկարներ են բացվում սովորողի անձի ինքնահաստատման և ինքնաարտահայտման համար:

Միաժամանակ, ուսուցչի կողմից հմտորեն կիրառելու դեպքում դրանք կարող են խթանել և բարենպաստ վերաբերմունք ձևավորել թեմայի ուսումնասիրության նկատմամբ:

Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությունը և արդիականացումը հիմք է հանդիսանում կրթության որակի բարելավման: Հարցերի կիրառությունը դասավանդման գործընթացում ամենահզոր գործիքներից մեկն է, և դրանց ճիշտ կիրառությունը զգալիորեն կարող է բարձրացնել ուսուցման որակը և ավելացնել սովորողների ներգրավվածության մակարդակը: Հարցեր տալու և հարցերին պատասխանելու կարողությունն ուսումնառության մեջ առանցքային և կարևոր տեղ է գրավում:

Ուսուցման արդյունավետության և սովորողների ներգրավածության բարձրացման համար քննարկվել են հարցադրման մի քանի ռազմավարություններ:

Հարցադրումների կիրառմամբ ոչ միայն կարելի է ստուգել նախկինում յուրացված գիտելիքների աստիճանը, խթանել վերլուծական մտածելակերպը, զարգացնել և

ամրապնդել ձեռք բերվածը, այլ նաև բարձրացնել աշակերտների ներգրավվածության աստիճանը, որն էլ իր հերթին ազդում է ուսուցման որակի և արդյունավետության վրա: Ավելին, ճիշտ ձևով կազմված հարցերը, որոնք տրվում են հոգեբանորեն ապահով միջավայրում, խրախուսում են ստեղծագործական և քննադատական մտածելակերպի զարգացումը, ինչպես նաև բարձրացնում են աշակերտների ինքնավստահությունը: Ուսումնական գործընթացի կազմակերպման առումով շատ կարևոր է նաև հարցեր տալու հմտությունը:

Կարևոր է ոչ միայն հարցերը ճշգրիտ ներկայացնել այլև դրանց տրամաբանական հերթականությունն ապահովելը, որի բացակայությունը կարող է աշակերտներին շեղել մատուցվող նյութից կամ դասի նպատակից:

Հարցերը պետք է լինեն

1.Հստակ

2.Նպատակաուղղված

3.Հակիրճ

4.Տեղին

5.Աշակերտների մակարդակին համապատասխան

6.Տրամաբանական հաջորդականությամբ

7.Մտածելու տեղիք տվող

8.Մանկավարժական գրականության մեջ հարցերը դասակարգվում են հետևյալ կերպ.

•Բաց՝ սովորաբար սկսվում են <<Ի՞նչ>> <<Ինչպե՞ս>> հարցերով: Այդպիսի հարցերը չեն ենթադրում միանշանակ պատասխան:

•Փակ՝ արտահայտվում է մեկ բառով պարզապես <<այո>> կամ <<ոչ>>:

•Ենթատեքստով՝ <<Դուք համաձայն եք, որ Y-ը ավելի հետաքրքիր է քան՝ X-ը կամ դուք հավանաբար կսխալվեք, եթե ընտրեք Z տարբերակը>> և այլն:

•Հետադարձ՝ ճշգրտվում է նյութի ընկալումը, աշակերտների զրույցի մեջ ընդգրկված լինելը նրանց պատասխանները զարգացնելու, կամ հետագա քնարկումը խրախուսելու և շարունակելու նպատակով:

•Հուշող՝ <<Չե՞ք կարծում արդյոք, որ ...>>, <<Մի՞թե դուք կարծում եք, որ ...>>:

•Ուղղորդող՝ <<ի՞նչ նոր հասկացությունների հանդիպեցինք այս թեման ուսումնասիրելիս>>:

Հայրենասիրության թեման՝ որպես արժեհամակարգի անփոխարինելի մաս.
Հայրենասիրությունը անգնահատելի դեր ունի աշակերտի դաստիարակչական արժեքների ձևավորման մեջ:Այս թեմաները դարձել են շատ արդիական և նույնիսկ՝ շատ խոցելի: Դիտարկենք մի երևույթ. դասարանում սովորում է աշակերտ, ում եղբայրը կամ հարազատը զոհվել է:Այստեղ անհրաժեշտ է դրսևորել նրբանկատություն և օգտագործել մանկավարժական նուրբ հոգեբանություն՝ հաշվի առնելով հոգեվիճակը: Հնարավոր է, այսօր արժեքները փոխվել են. մոտեցումները այլ են:Միգուցե այդպիսի աշակերտը ըմբոստանա, արտահայտի այլ կարծիքներ, անհամաձայնություն դրսևորի, ինչը շատ բնական է:

Հետազոտենք ութերորդ դասարանում սովորող աշակերտներին Ռաֆֆու «Խենթը» անցնելիս: Այստեղ տեղին է օգտագործել արտադասարանական ընթերցանության դասաժամերը՝ կարևոր հատվածները ընթերցելու համար: Ստացված դաս ունենալու համար կարելի է առաջին դասն անցկացնել Վաղարշապատում էքսկուրսիայի միջոցով՝ մոտիվացիա առաջացնելու համար:

Աշակերտները կլինեն «Խենթ»-ի հերոսի գերեզմանի մոտ (մենք գիտենք, որ հերոսի նախատիպը եղել է): Աշակերտի մոտ հետաքրքրությունը էլ ավելի կմեծանա, սկիզբը կլինի խոստումնալից: Արժեքային համակարգ-վեպի դրական կերպարներին ուսումնասիրելով և բազմակողմանի աշխատանքներ կատարելով՝ կխթանենք աշակերտների հայրենասիրությունը,անձնվիրությունը:

Ընթացքը:**Խթանում**:Մտագրոհի մեթոդով գրատախտակին գրում ենք,,հայրենիք՛՛ բանալի բառը,գտնում ենք հոմանիշներ կամ այդ բառն ամբողջացնող արտահայտություններ:



Իմաստի ընկալման փուլ-Նախօրոք հանձնարարում ենք դասարանի 4 աշակերտների գրել վեպի շաառիթը,պատմական հիմքը, աղբյուրները,դարաշրջանը ներկայացնող շարադրանք:Նյութի շուրջ տարբեր մեկնաբանություններն ու պատճառաբանությունները քննարկելուց հետո աշակերտներին առաջադրվում է Վարդանի կերպարին առնչվող հարցեր ,որոնք նպաստում են ինչպես ինքնուրույն խոսելու և գրելու կարողությունների զարգացմանը,այնպես էլ ազգային արժեհամակարգի ձևավորմանը:

Թեման շատ արդիական է. Վարդանը՝ վեպի գլխավոր հերոսը, երազում էր նոր Հայաստանի մասին իր գաղափարակիցների հետ:

Վարդանի կերպարն ամբողջացնելուց հետո դասարանի ուշադրությունը հրավիրում ենք ժողովրդի կերպարների բնութագրմանը:Վերհիշում ենք<<Գյուղ կանգնի,գերան կկոտրի>>ասացվածքը,որի միտքը մեկնաբանելուց հետո աշակերտներին առաջարկում ենք աշխատել կերպաարների վերլուծության վրա գծապատկերով:Հանձնարարում ենք բնութագրել հերոսներին:Առաջարկում ենք գտնել մերօրյա վարդաններ ։

Կշռադատման փուլ-Հարցերի տեսքով աշակերտներին տրվում են թերթիկներ,լրացնում են՝ամբողջացնելով վեպի դրական հերոսներին: Հանձնարարում ենք 10-րոպեանոց շարադրանք՝<<Խենթը>>վեպի դրական կերպարների ազդեցությունը ինձ վրա>>վերնագրով:

Էլեկտրոնային մեդիայի ազդեցությունը սովորողի արժեհամակարգի ձևավորման գործընթացում: Այստեղ տեղին է օգտագործել իմացական արժեհամակարգ գաղափարը:Ինչպիսի՞ն է այն մեր առարկաների շրջանակներում:Այստեղ օգնության են գալիս ՏՀՏ գործիքները ժամանակակից կիրառությամբ ինչն էլ իր հերթին թելադրում է արժեհամակարգ ձևավորման սեփական կանոնները: Երբեմն այս ճանապարհին ետին պլան են մղվում ազգային, պետական, մշակութային, քաղաքակրթական արժեքները, ինչը դառնում է հանրության արժեհամակարգի ձևախեղման պատճառ: Աշակերտի մեդիագրագիտությունը պետք է օգտագործել ի նպաստ մեր առարկաների:

Հանձնարարում ենք դասարանին գործնական աշխատանք՝ նոր թեման ուսումնասիրելու համար:Գործնական աշխատանքի թեման է «Հինգերերդ դարի պատմիչներ»: Այստեղ կատարում ենք աշակերտակենտրոն ուսուցում. դասարանը բաժանում ենք երկու խմբի, խմբերը ընտրում են ավագներ, ընտրում են այնպիսի աշակերտների, ովքեր տիրապետում են ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներին:

Հանձնարարությունը հետևյալն է.

1.Տարբեր կայքերից հավաքել տեղեկություն 5-րդ դարի պատմիչների մասին

2.Կազմել սահիկաշար

3.Կատարել օնլայն այց տարբեր թանգարաններ, պատկերասրահներ

4.Ներկայացնել հատվածներ տեսաֆիլմերի տեսքով

Բոլորս գիտենք, որ այսօրվա աշակերտը չի պատկերացնում իր կյանքն առանց հեռախոսի կամ համակարգչի : Հաշվի առնելով դա՝ այդ ամենը կփորձենք կիրառել՝ ի նպաստ մեր ուսուցման:

Աշխատանքի ավարտին աշակերտները համակարգչային սենյակում ներկայացրին իրենց պատրաստած նյութերը. ամեն մեկը այստեղ ուներ իր գործառույթը և դերը: Կատարվել էր համախմբված աշխատանք:

Հետազոտենք աշակերտների պահվածքը, նկատվում է.

1.Ինքնավստահություն

2.Ակտիվ մասնակցություն

Առողջ մրցակցություն(սկսում են միմյանց փոխանցել նոր գիտելիքներ)

4.Հնարավորություն բացահայտելու աշակերտի ուղղվածությունը(երբեմն այսպիսի խելացի աշակերտները աննկատ են մնում)

5.Իմացական մակարդակի դրսևորում

6.Համագործակցային աշխատանք համադասարանցիների հետ

7.Ներկայանալու հնարավորություն

8.Նոր գիտելիքներ մեդիագրականության շնորհիվ

Վերլուծելով կատարված աշխատանքը՝ պարզ է, որ այս գործնական աշխատանքը ավելի ստացված է, քան նախորդները: Այստեղ սովորողը կարողացավ ինքնադրսևորվել, լինել ներկայանալի, ձեռք բերեց հարգանք և՛ մանկավարժական կոլեկտիվում, և՛դասարանում:

Այսպիսի համագործակցային փոխհարաբերությունների միջոցով ստեղծվում է կապ աշակերտի և ուսուցչի միջև, որը նպաստում է մտավոր և դաստիարակչական խնդիրների հեշտ լուծմանը:Այս ամենը վկայում է այն մասին,որ աշակերտի արժեհամակարգը ձևավորվում է ներդաշնակության սկզբունքով,որում իր ուրույն տեղը պիտի ունենա սերտ հաղորդակցումը ուսումնական մյուս բնագավառների հետ:Մեր առջև դրված է որոշակի խնդիր յուրաքանչյուր դասի ժամանակ: Այս դասի նպատակն էր՝ աշակերտը իմանա հինգերերդ դարի պատմիչներին,ունենա համապատասխան և նվազագույն գիտելիքներ:

Իմացական արժեքները սովորողի մեջ արժեքային համակարգի ձևավորման կարևոր տարրերից է: Այն աշակերտին տալիս է բազմակողմանի գիտելիքներ:Իմացական արժեքների ձևավորման գործընթացում մեծ է նաև հայոց լեզվի դերը.այստեղ աշակերտը հնարավորություն ունի ի ցույց դնել ունեցած գիտելիքները՝ իր ունեցած նախկին գիտելիքների շնորհիվ:

Հոգևոր արժեքների ձևավորումը սովորողի մոտ.Հոգևոր արժեքների մասին մենք ամենաշատն ենք խոսում մեր դասաժամերին, աշակերտը տարբերում է նյութական արժեքը հոգևոր արժեքից:Դասի արժեքային համակարգի մասին խոսելիս միշտ խոսվում է հոգևոր արժեքների մասին, քանի որ ուսուցչի դերը այստեղ շատ մեծ է: Զգայուն, խաղաղ, մտածողական և մարդկային լավ հատկանիշներով օժտված լինելը վկայում են հոգևոր բարձր արժեքներ ունենալու մասին: Կրթօջախը սովորողին սովորեցնում է ճշմարտությունը, փոխանցում է հավատ, հույս,աշակերտը դառնում ե ներդաշնակ:Ահա այս արժեքներն են սահմանվում հիմնարար հոգևոր արժեքներ: Հոգևոր արժեքները անհրաժեշտ են անընդհատ աճելու, զարգանալու և առաջընթացի համար:

«Եթե դուք ունակ եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը դժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման ուրախությունն է, հաղթանակի բերկրանքն է, ինքնուրույն դառնալու, տիրելու ու տիրապետելու երջանկությունը»:

1. ՕՐՎԱ ԴԱՍԻ ՊԼԱՆ

Ամիս- ամսաթիվ՝ 22.09.2023

Ուսուցիչ- Ռ. Հովսեփյան

Առարկա՝ Գրականություն

Դասարանը՝՝ 8-րդ

Թեմա՝ Գաղափար պոեմի մասին: Հ. Թումանյանի <<Թմկաբերդի առումը>> պոեմը

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Սովորողը պետք է՝

- Ներկայացնի Հ. Թումանյանի կենսագրության հիմնական փաստերը,
- Ներկայացնի Թումանյանի ստեղծագործական ընդհանուր բնութագիրը
- Գնահատի և արժևորի Թումանյանին՝ որպես գրողի և հասարակական գործչի:

Սովորողը կկարողանա՝

- Թվարկի և բացատրի պոեմի ժանրային առանձնահատկությունները, համեմատի գրական այլ ժանրի հետ,
- Կբացատրի պոեմի հիմնական գաղափարը
- Դատողություններ անել չարի ու բարու, մարդկային լավ ու վատ արարքների մասին
- Բնութագրի և համեմատի պոեմի հերոսներին
- Անգիր արտասանել հատվածներ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ՝

- Լսելու:
- Ընկալածը վերարտադրելու:
- Տրամաբանելու:
- Հաղորդակցվելու:
- Ստեղծագործելու:

Դասի տեսակը՝ խառը

Կիրառվող մեթոդներ՝ Т-ձև աղյուսակ, ուսումնական նախագիծ, սահիկահանդես, m-ձև աղյուսակ:

Ուսումնական նյութեր՝ համակարգիչ, պաստառներ, նկարներ, տեսանյութ, գրքեր, տետրեր, բառատետրեր:

Միջառարկայական կապ՝ պատմություն, երաժշտություն, աշխարհագրություն:

Դասի ընթացքը՝ Ապահովել կազմակերպչական մասը, խթանիչ հարցերի միջոցով ակտիվացնել դասարանը: Կատարել դասի հարցում՝ կիրառելով ուսումնական նախագիծ մեթոդը: Աշակերտներից յուրաքանչյուրը ներկայացնում է ուսումնական 5 նախագծերից նախապես ընտրած և պատրաստախ իր աշխատանքը:

- Նախագիծ 1.<<Թումանյանը ընտանիքում>>
- Նախագիծ2. <<Թումանյանի հեքիաթները>>
- Նախագիծ 3. <<Վերնատուն>>
- Նախագիծ 4. <<Թումանյանի հայրենասիրությունը>>
- Նախագիծ 5. <<Թումանյանը և նրա ապրած ժամանակաշրջանը>>

Կատարվում է գնահատում: Հենակետային հարցերի միջոցով կատարել դասի սահուն անցում: Ներկայացնել Թումանյանի բազմաժանր ստեղծագործությունները և բացատրել, թե ինչ է պոեմը, ներկայացնել պոեմի տեսակները՝ կենտրոնանալով <<Թմբկաբերդի առումը>> պոեմի վրա:

Ներկայացնել <<Թմբկաբերթի առումը>> պոեմի նախապատմությունը և օպերայի վերածել: Համկարգչի միջոցով լսել և դիտել <<Թմբկաբերթի առումը>> պոեմի նախերգանքը: Նախերգանքի լսումից հետո լրացնել նախապես գծված Т-ձև աղյուսակի երկու հակադիր կողմերը մարդկային լավ և վատ որակային հատկանիշներով: Հստակեցնել, որ պոեմում Թումանյանը նույնպես ներկայացրել է մարդկային տարբեր հատկանիշներ: Համառոտ մեկնաբանվում է հետևյալ խոսքերը.

1.Մենք ամենքս հյուր ենք կյանքում

Մեր ծծնդյան փուչ օրից,

Հերթով գալիս անց ենք կենում

Էս անցավոր աշխարհից

2.Երնեկ նրան, որ իր գործով

Կապրի անվերձ անդադար:

2.Չարն էլ է միշտ ապրում անմեռ,

Անեծք նրա չար գործին...

Ուսուչուհին նախապես ամփոփ նյութ է հաղորդում պոեմի հերոսների և բովանդակության վերաբերյալ, որից հետո շարունակվում է պոեմի ունկնդրումը մինչև 5- րդ գլուխը: Այդ ընթացքում ուսուցչուհին գրատախտակին գրում է բոլոր անահասկանալի բառերը և նրանց բացատրությունները:

Գրականության տետրում գծում m _աձև աղյուսակ, լրացվում է Թաթուլ Իշխանի, Նադիր շահի և Թմկա տիրուհու բնութագրերը:Այնուհետև T-աձև աղյուսակի միջոցով ներկայացնում ենք արժեքներ,որոնք կրում են պոեմի հերոսները և արժեքներ,որոնցից զուրկ են:

Մարդկային արատներ կրող	**Մարդկային բարձր հատկանիշներ կրող**
Մեծամտություն	Առաքինություն
Փառասիրություն	Հեզություն
Եսասիրություն	Խոնարհություն
Գոռոզություն	Խորագիտություն
Դատարկամտություն	Համեստություն
Դավաճանություն	Հայրենասիրություն

Իմաստի ընկալման փուլում զրույցի մեթոդի միջոցով փորձում ենք պարզել թեմայի ընկալման մակարդակը յուրաքանչյուր աշակերտի մոտ: Զրույցի միջոցով ուսուցիչը ամփոփում է նոր նյութի ընկալումը:

ԿՇՌԱԴԱՏՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓՈՒԼԻ ՆԿԱՐԱԳՈՒԹՅՈՒՆԸ

Խմբերին բաժանում են հարցաթերթեր: Հարցերը վերաբերում մարդկային արժեքներին:Յուրաքնչյուր խումբ ներկայացնում է իր տեսակետը և հիմնավորում: Կշռադատման փուլի ավարտին ամփոփել արդյունքները, ստուգել և իրականացնել ձևավորող գնահատում:

Գնահատման հիմնական սկզբունքները հետևյալն են՝

- օբյեկտիվություն,
- արդարություն,
- հուսալիություն,
- անկողմնակալություն,
- հավաստիություն,
- հիմնավորվածություն,
- մատչելիություն,
- թափանցիկություն:

Տնային առաջադրանք՝ անգիր սովորել պոեմի նախերգանքը և բառատետրերում գրել բոլոր անծանոթ բառերն իրենց բացարությամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Կրթությունն այն է, ինչ մնում է դպրոցում սովորածը մոռանալուց հետո >>: Ալբերտ Էյնշտեյնի այս միտքն էլ ուզում եմ ելակետ ընդունել իմ եզրակացությունը գրելու համար:

Այս հետազոտական աշխատանքը շոշափում է մի այնպիսի թեմա ,որը անկասկած շատ մեծ նշանակություն ունի Հայաստանի և հայ ժողովրդի համար: Խոսքը գնում է ազգային արժեքային համակարգի ձևավորման մասին հայ գրականության դասերին: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, հատկապես՝ գրականություն առարկան: Դպրոցում սովորողները հայ գրականության ծրագրի շրջանակներում ծանոթանում են հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական քաղաքակրթությանը, նրա առաջացման ու զարգացման օրինաչափություններին, ձեռքբերումներին,ստեղծած արժեքներին և համամարդկային նվաճումներին, ինչպես նաև՝ այդ ճանապարհին հայ ժողովրդի դժվարություններին ու կորուստներին: Հայ գրականություն առարկայի ուսումնասիրման շնորհիվ ձևավորվում է ազգային դիմագիծ, պետականամետ մտածելակերպ ունեցող հայ ժողովրդ և հայոց պետականության դերը համաշխարհային պատմության համատեքստում պատկերացնող, հայոց ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու անձ ու քաղաքացի:

Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա,որ որպես հայ՝ ո՞ր է իր անելիքն այստեղ՝ հայրենիքում:Ազգային գաղափարախոսությունը պետք է հուշի սեփական պատմական առաքելությունը,որտեղ ամենակարևորը հայրենիքը սիրելն է իրական սիրով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ.:

2.. Գասպարյան Դ.-Գրականություն 8-րդ դասարան

3.Մուդրիկ Ա. Վ., Դպրոցականի անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում, Երևան, 1986 թ. :

4.Մանասյան Ն., Հանրակրթության արժեքային համակարգը, «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 2004թ., N1/2, էջ 6-15: